

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ СООБЩЕНИЯ И ЗАМЕТКИ

ՄԿՐՏԻՉ ԷՄԻՆ

(Ծննդյան 155 և մահվան 80-ամյակի առթիվ)

Ս. Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

«Մեր որդիք և թոռները կոնահատեն այդ ալեգարդ ծերունու տված երախտիքը մեր աչգին... Մկրտիչ էմինին ճանաչում է ազգը յուր հնադարյան պատմության վրայից ստվար քողը հանող¹։ Այս խոսքերը պատկանում են Ռ. Պատկանյանին, որը բախտ է ունեցել Մոսկվայի Հաղարյան ճեմարանում աշակերտելու մեծանուն հայազետին։


Մ. էմինի դիտա-մանկավարժական բեղմնավոր գործունեությունը ցարդ համակողմանի չի ուսումնասիրվել և ըստ արժանվույն չի գնահատվել։ Ե. Շահագիրզի² և Գ. Խալաթյանցի՝ էմինին նվիրված ուսումնասիրությունները ամբողջական պատկերացում չեն կարող տալ այն հսկայական գիտամանկավարժական, թարգմանչական, հրատարակչական ու տեքստաբանական աշխատանքների մասին, որ կատարել է նա։

Մկրտիչ էմինը ծնվել է 1815 թ. նոյեմբերի 25-ին, Նոր Զուլայում, որը համարվում էր ժամանակի բարգավաճ հայ գաղթօջախներից մեկը։ Նոր Զուլան հիմնել էին Շահ-Աբասի կողմից բռնի տեղահանված ու Պարսկաստան տարված հայերը։ Սակայն այդ բարգավաճ հայ գաղթօջախը մեծ ողբերգություն ապրեց, երբ Շահ-Աբասի մահից հետո ապստամբած աֆղանները 1721 թ. գրավելով այն, ասպատակեցին ու մեծ վնաս հասցրին։ Սա պատճառ դարձավ, որ հայերը դիմեն նոր գաղթի, այս անգամ՝ դեպի Հնդկաստան և այլ երկրներ։

Էմինյանների ընտանիքն էլ ղերծ չի մնում այդ բարրարոսական ասպատակությունից։ Երբ ծնվում է Մկրտիչը, նրանց ընտանիքը արդեն տնտեսապես շատ էր քայքայվել։ Եվ քանի որ Նոր Զուլայում չկար քիչ թե շատ կանոնավոր դպրոց, Մկրտիչին հանձնում են ծխական քահանային, որի մոտ էլ գրաճանաչ է դառնում։

1824 թ., երբ դեռ նոր էր բուրել պատանի Մկրտիչի ինը տարին, նրան տանում են Կալկաթա, տատի (մոր կողմից) մոտ, որը հնդկահայ նշանավոր վաճառական էմինի կամ էմինյանի կինն էր։

Հնդկահայ գաղթօջախները, որոնք հիմնվել էին Կալկաթայում, Բոմբեյում և Մադրասում, շնորհիվ հայերի ձեռներեցության և հայերի նկատմամբ Հնդկաստանի կառավարության ցուցաբերած բարյացակամ վերաբերմունքի, կարճ ժամանակամիջոցում տնտեսապես ամրապնդվում



¹ «Празднование пятидесятилетнего юбилея учено-педагогической деятельности Н. О. Эмина», М., 1887, էջ 9։

² Ե. Շահագիրզի, Մկրտիչ Հովսեփյան էմին. կենսագրական, գրական տեսություն, Թիֆլիս, 1900։

են. հիմնվում են դպրոցներ, տաճարաններ, եկեղեցիներ, հիվանդանոցներ: Աշխուժացում է ապրում մշակութային ու կրթական կյանքը: Հնդկահայ զաղթօջախների այդ բարգավաճ ժամանակ է, որ պատանի Մկրտիչը ոտք է դնում Հնդկաստան, Կալկաթա:

1824 թ. ազգականները էմինին տալիս են Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանը: Այստեղ նա աշակերտում է հայադիտության ուսուցիչ Հովհաննես Ավդալյանին (Ավդալ) և հետագայում հայտնի ժանկավարժ ու գրող Մեսրոպ Բաղդասարյանին: Մեծ է լինում ուսուցիչների ազդեցությունը պատանու վրա: էմինը Հայոց մարդասիրական ճեմարանում սովորում է հինգ տարի: Թեև նա այդ տարիներին ձեռք է բերում այն, ինչ կարող էին տալ ճեմարանը և ուսուցիչները, սակայն ճեմարանը չկարողացավ բավարարել ուսումնառարարական պատանու հոգևոր պահանջները: Նա երազում էր հիմնավոր կրթություն ստանալ, մի բան, որ հնդկահայ զաղթօջախում անհնար էր: Մ. էմինը լսել էր Մոսկվայի Հայկարյան ճեմարանի մասին: Սակայն ոչ միայն Հայկարյան ճեմարանում սովորելը, այլև Մոսկվա հասնելը սոսկ երազանք էր նրա համար:

Նվաճա ներկայանում է երջանիկ առիթը: 1829 թ. երբ էմինը արդեն տասնչորս տարեկան էր, Կալկաթայի նավահանգստում խալիսի է գցում շվեդական առևտրական մի նավ, որի նավապետն էր շվեդ: Երբ էմինը իր ցանկության մասին հայտնում է նավապետին, վերջինս չի կարողանում մերժել պատանու յախանձանքը՝ իրեն էլ Ստոկհոլմ առաքել:

1829 թ. մայիսին շվեդական նավը խալիսի է վերցնում Կալկաթայի նավահանգստից և այն ժամանակվա Հնդկաստանից եվրոպա տանող միակ ծովային ճանապարհով, որն անցնում էր աֆրիկյան մայր ցամաքի արևմտյան ափերով, Ստոկհոլմ է հասնում նույն թվականի հոկտեմբերին: Վեց ամիս տևող, թեև փորձություններով ու դժվարություններով լի, բայց հետաքրքիր ճամփորդությունը անջնջելի տպավորություն է թողնում պատանու վրա:

էմինը Մոսկվա է հասնում 1829 թ. նոյեմբերին և նույն թվականին էլ ընդունվում է Հայկարյան ճեմարան: Ուսումնառության տարիներին նա հանդես է բերում այնպիսի եռանդ ու աշխատասիրություն, որ թիւր անսովոր ընդունակությունների շնորհիվ՝ հիացնում է շատերին: Նա Հայկարյան ճեմարանը ավարտում է 1834 թ.: Այլ լեզուներից բացի նա կարճ ժամանակում տիրապետում է ռուսաց լեզվին այնպես հիմնավոր, որ Կրոտկովի հեղինակագրությամբ ֆրանսերենից ռուսերեն է թարգմանում Վիլմենի «Միջին դարերի գրականության պատմությունը», որը լույս տեսնելուց հետո բարձր գնահատականի է արժանանում «Տեխնիկա» հանդեսի կողմից:

Հայկարյան ճեմարանը փայլուն կերպով ավարտելուց հետո, Մկրտիչ էմինը ընդունվում է Մոսկվայի կայսերական համալսարանի փիլիսոփայական բաժանմունքի բանասիրական մասը և այն ավարտում 1838 թ.: էմինին հաջողվում է պաշտոնավարելու իրավունք ստանալ Հայկարյան ճեմարանում և ստանձնել հայոց լեզվի ուսուցչի պաշտոնը: Հայկարյան ճեմարանում էլ սկսվում է էմինի ժանկավարժական բուռն գործունեության շրջանը:

1846 թ. էմինը հրատարակում է իր «Բերականոնություն Հայկազյան լեզվի» աշխատությունը: Այդ ժամանակ հայկական դպրոցներում գեղեստագիտություն շուրջ ընդհանուր կողմից ընդունված միասնական բերականության ձևերով:

1849 թ. էմինը հրատարակում է իր «Ընտիր հատուածք»³, որ ներկայացնում էր հայ նշանավոր մատենագիրներից քաղված ընտիր հատվածները: Մինչ այդ աշակերտներին հրամցվում էր որևէ մատենագրի գործ և աշակերտը ծանոթանում էր միայն տվյալ մատենագրին, անհաղորդ մնալով մյուսներին: էմինի կազմած «Ընտիր հատուածքը» փաստորեն մի քրեստոմատիա էր, որը գալիս էր ծածկելու այդ բացը, նպաստում աշակերտների բազմակողմանի զարգացմանը:

1850 թ. էմինը հրատարակում է իր նշանավոր աշխատությունը՝ «Վեպե հնոյն Հայաստանի», որը և մեծ ճանաչում բերեց գիտնականին: Մինչև նշված աշխատության լույս տեսնելը հայադիտության մեջ արմատացած էր այն թյուր կարծիքը, թե հայ ժողովուրդը, թեև ունի հարուստ մատենագրություն, բայց իր դարավոր պատմության ընթացքում չի ստեղծել վիպական երգեր: էմինը, որ ուսումնասիրել և խորամուխ էր եղել հայ մատենագրության և հատկապես Մ. Խորենացու «Հայոց պատմության» մեջ, գալիս է այն հաստատ համոզման, որ հայ ժողովուրդը շատ հին ժամանակներից ունեցել է նաև հարուստ վիպական երգեր, որոնցից սոսկ թանկագին փրանքներ են պահպանվել հայ հին մատենագիրների մոտ:

³ «Էջմիածին», 1947, № 11—12, էջ 52:

⁴ «Празднование...», էջ 22:

⁵ «Телескоп», М., 1836, էջ 48—50:

⁶ «Ընտիր հատուածք՝ քաղելի ի դրոց նախնի և արդի մատենագրաց հայոց հանդերձ բառագրքով ի հայկական է ուսաց բարբառ», Մոսկվա, 1849:

Ֆրանսիացի հայտնի գիտնական, հայագետ էդուարդ Դյուլորին, որին էմինը զրախոսելու համար ուղարկել էր իր ղերբը, ծանոթանալով զործին, հատուկ զրախոսականում արժեքավորում է այն: Փարիզի Ասիական ընկերությունը, որ հիմնվել էր 1882 թ. Սեն Մարտենի կողմից, նկատի ունենալով էմինի գիտական վաստակը, էդ. Դյուլորիի ջանքերով նրան ընտրում է այդ նույն ընկերության անդամ:

1882 թ. էմինը թողնում է մանկավարժական աշխատանքը և ամբողջապես նվիրվում գիտությանը:

Հայն է եղել էմինի գիտական գործունեության ոլորտը. նրան հետաքրքրել են հայոց պատմության, զրականության, հնագիտության, լեզվի, հեթանոսական Հայաստանի դիցաբանության հարցերը: Նա միաժամանակ կատարել է թարգմանչական և տեքստաբանական աշխատանքներ՝ նպատակ ունենալով հայկական հարուստ մատենադրական գանձերը մատչելի դարձնել ուսուսանողական գիտական աշխարհին: Մի աղնիվ առաքելություն էր դա, որը նա կատարեց նվիրվածությամբ ու գիտական բարեխղճությամբ, կանգ չառնելով իր առջև ծառացած խոշորագույնների ու դժվարությունների առջև:

Խորապես ուսումնասիրելով Մ. Խորենացու «Հայոց պատմության» հայկազյան հարստության շրջանը, Մ. էմինը իր առջև խնդիր է դնում այդ մեծարժեք աշխատությունը ոչ միայն թարգմանել և մատչելի դարձնել օտարներին, այլև մեծ ջանքեր է թափում ժամանակի բանասիրական զրականության հիմքի վրա (որ տակավին նոր էր սկսել զարթոնք ապրել) լուսաբանել հայ բանասիրության մեջ դեռևս մութ մնացած մի շարք հարցեր: Այդ կարևոր հարցերից մեկն էլ նախաքրիստոնեական Հայաստանի կամ հեթանոս հայերի դիցաբանության ու հավատքի էության պարզաբանումն էր, որ դեռ վերջնական գիտական մեկնաբանում չէր ստացել: Ահա այդ նպատակով էլ էմինը 1864 թ. Մոսկվայում հրատարակեց իր աշխատությունը⁷՝ նվիրված նշված հարցերին:

Ս. էմինը հեթանոս հայերի հավատքի ու կրոնի հարցերը լուսաբանելու համար դրանք ենթարկում է դասակարգման: Նա հայ դիցաբանությունը բաժանում է հետևյալ խմբերի՝ հայկական, հնդկական, հունական, ասորեստանյան պանթեոնի (դիցաբանի) աստվածություններ: էմինը հայկական պանթեոնի աստվածությունների շարքին է դասում Անահիտ, Վահագն, Աստղիկ, Նանե, Տիր և Բարձամինա աստվածներին: Հնդկական պանթեոնի մեջ՝ Գիսանե և Դեմետր եղբայրներին, որոնք աստվածացվել էին իրենց հետնորդների կողմից: Հունական պանթեոնի մեջ՝ Ապոլոն, Արտեմիս, Աթենաս, Հերակլես, Դիոս և Հեփեստոս աստվածներին, որոնց արձանները Հայաստան էին բերվել Տիրացու և Արտաշեսի կողմից: Սրանք թեև բուն հունական աստվածներ էին, սակայն պաշտվել էին նաև հեթանոս հայերի կողմից: Ասորեստանյան պանթեոնի մեջ է դասում Նաբոգ, Բել, Բաթինիթադ և Թարաթա աստվածներին, որոնք, ինչպես վկայում է Խորենացին, երկրպագվել են հայոց Արգար թագավորի ժամանակ և համարվել են նրա կուռքերը (Նաբոգ, Բաթինի Թադ, Թարաթա):

Հայերի հավատքի հարցերը քննելիս էմինը, հենվելով հայ հին մատենագիրների վրա, այն եզրահանգմանն է գալիս, որ մեր հեթանոս նախնիները հավատացել են հոգու հարության և անմահության գաղափարին: Այդ միտքը հիմնավորելու համար նա մատնացույց է անում հայերի մեջ տարածված Արա Դեղեցիկի և Շամիրամի առասպելը, Արայի՝ արալեզների զորությամբ հարություն առնելու փաստը: Հոգու անմահության գաղափարը, ըստ էմինի, այնքան ուժեղ է եղել հայերի մոտ, որ նույնիսկ քրիստոնեության տարածվելուց հետո էլ նրանց մեջ արմատացած է եղել այդ հավատը: Այդ է հաստատում Փ. Բուզանդը իր «Հայոց պատմության» մեջ: Խոսելով սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի դավադրաբար սպանվելու մասին, նա հաղորդում է, որ Մուշեղի հարազատները չէին հավատում նրա մահվանը և հավատացած էին, որ առլեզները կկենդանացնեն նրան: էմինի կարծիքով հոգու անմահության գաղափարն է թաքնված նաև Պլատոնի «Հասարակապետություն» գրքում շարադրված «էր Հայի» առասպելում, որին նա վերագրում է հայկական ծագում, գտնելով, որ «էր Հայի» առասպելը Արա Դեղեցիկի առասպելական զրույցի արձագանքը պետք է լինի:

1873 թ. էմինը մի առանձին ուսումնասիրություն է նվիրում Վահագն Վիշապաքաղին⁸, որի մասին հյուսված վիպական երգի մի հատված պահպանվել է Մ. Խորենացու մոտ: Նա ապացու-

⁷ Н. Эмин, Очерк религии языческих армян, М., 1864.

⁸ Տե՛ս Փավստոս Բուզանդ, Պատմություն Հայոց, Վենետիկ, 1889, դպր. 5-րդ, գլ. 16:

⁹ Н. Эмин, Вахаги-Вишапаках армянской мифологии есть Индра-Вринтрахи Риг-Веды. Несколько страниц сравнительной мифологии, СПб, 1873.

ցում է, որ հայ դիցաբանության վահագն վիշապաբաղը նույնն է, ինչ Ռիդ-Վեդայի Ինդրա-Վրիթ-րահանը:

1881 թ. Մ. Հմինը հրատարակում է իր նոր աշխատությունը՝ «Մովսես Խորենացին և հին հայոց վեպերը» (ռուսերեն լեզվով): Այն թարգմանվում և սույադրվում է նախ «Արձագանք» շաբաթաթերթում (1886 թ.) և ապա լույս է տեսնում առանձին գրքով (1887 թ.): Այս աշխատությունը կարելի է համարել Հմինի 1850 թ. հրատարակած «Վեպ հնույն Հայաստանի» աշխատության մեջ արտահայտած տեսակետների ավելի հիմնավորումն ու խորացումը: Նա այն հետևություններն է հանգում, որ Խորենացու համար որպես աղբյուր ծառայել են ժողովրդական վիպասանությունը, վիպական երգերը, թվելյաց երգերը, թագավորական մատյանները, հին զրույցներն ու ավանդությունները: Նա հանդամանորեն քննության է առնում Մ. Խորենացու «Հայոց պատմության» մեջ տեղ գտած Հայկի, Արամի, Արայի, Տիգրանի մասին առասպելներն ու վեպերը:

Իր գիտական գործունեության ընթացքում ուսումնասիրության առարկա դարձնելով գրականության խնդիրները, Հմինը եկել է այն համոզման, որ հայ հին գրականության շատ հարցեր անհնար է ճիշտ լուսարանել, առանց ուսումնասիրելու հայ ժողովրդի պատմությունը և ընդհանրապես պատմության շատ հարցեր հնարավոր է պարզաբանել միայն հայ հին գրականության հարցերի հիմնավոր լուծում ստանալուց հետո: Այս առումով էլ նա հրատապ է համարում առահիկայում հայ ժողովրդի պատմության և գրականության քննական պատմություն ստեղծելը: Հմինը հտնում է, որ այդ ուղղությամբ պետք է կատարվի մեծ ու հետևողական աշխատանք, որպեսզի դրվեն հայ ժողովրդի քննական պատմության և գրականության քննական պատմության հիմքերը:

Այս մոտեցումն էլ ստիպում է Հմինին գրելու «Մովսես Խորենացին և հին հայկական վեպեր», «Հայկազյան հարստության ժամանակագրությունը» և այլ գործեր: Վերջին աշխատության պատմագիտական նշանակությունն այն է, որ այստեղ առաջին անգամ հայ բանասիրության մեջ քննական մոտեցում է հանդես բերվում Մ. Զամչյանի «Հայոց պատմության» ժամանակագրության նկատմամբ:

Առանձին աշխատություններ է նվիրել Հմինը Արշակունյաց հարստություններին (հայկական, քուշական, մասքութական)՝ նրանց սկզբնավորումից մինչև անկումը: Նա անդրադարձել է հայ և վրաց եկեղեցիների պառակտման հարցերին և շարժառիթներին, ինչպես նաև Կարսի հայկական եկեղեցուն¹⁰:

1880-ական թթ. Մոսկվայի հնագիտական ընկերության նախագահ է դառնում Ա. Ուվարովը, որը մոտիկ հարաբերության մեջ էր Հմինի հետ: Այդ տարիներին է, որ ընկերությունը մեծ հետաքրքրություն է հանդես բերում Հայաստանի հնագիտական հուշարձանների նկատմամբ: Ա. Ուվարովի խնդրանքով Հմինը կազմում է ընդարձակ տեղագրական ցուցակ՝ «Ռուսական Հայաստանի հնագիտական հուշարձանների մասին» վերնագրով և ներկայացնում ընկերությանը: Հմինը ցուցակում նշում է նաև այն վայրերը, ուր կարելի կլինի հնագիտական պեղումներ կատարել:

1858 թ. Գաբրիել Ավագովսկին Փարիզում հրատարակում է իր «Միջակ վարդապետարանը»¹¹, որը մեծ վրդովմունք ու դժգոհություն առաջացրեց հայ մտավորականության շրջանում: Առաջինը Հմինն էր, որ հանդես եկավ մի հոդվածով¹², ուր նա Գ. Ավագովսկու «Վարդապետարանի» լույս աշխարհ գալը համարում է շափաղանց վտանգավոր հայ երեխաների դաստիարակության գործում: «Վարդապետարանի» դեմ հանդես է գալիս նաև Մ. Նալբանդյանը և մերժում այն:

Մկրտիչ Հմինը 1858 թ. հրատարակում է մի հոդված՝ նվիրված հայկական այբուբենին¹³, հոսելով հայոց գրերի ստեղծման և հայ ժողովրդի կյանքում խաղացած դերի ու նշանակության մասին, նա քննության է առնում նաև նախամեսրոպյան գրության հարցը: Հմինը այն կարծիքին է, թե նախամեսրոպյան շրջանում հայերը ունեցել են իրենց սեփական, ազգային գրությունը,

¹⁰ «Об армянской церкви в г. Карсе» («Русские ведомости», 1879), որպես պատասխան «Московские ведомости» լրագրին:

¹¹ «Միջակ վարդապետարան ուղղափառ հաւատոյ Հայաստանեայց եկեղեցւոյ, շարագրեաց Գաբրիել վ. Ավագովսկի, առաջնորդ Պետրապիոյ և նոր նախիջևանայ», Փարիզ, 1858:

¹² Н. Эмин, Отзыв о Катехизисе архимандрита Г. Айвазовского, տե՛ս «Переводы и статьи Н. О. Эмина», М., 1897.

¹³ Н. Эмин, Об армянском алфавите, տե՛ս «Исследования и статьи Н. О. Эмина», М., 1896, էջ 17:

սպտադործել են, ինչպես ինքն է վկայում, Նշան և Նշանավորը. որոնց և հետագայում հաջորդել է մեսրոպյան գրությունը: Հոգվածում քննության է առնվում նաև դաճիկյան կոչված նշանագրերի հարցը: Էմինը հավաստում է, որ հեթանոս հայերը ունեցել են իրենց ազգային այբուբենը՝ դեռևս անհիշելի ժամանակներից, բոլր և հետագայում կամուրջ է հանդիսացել մեսրոպյան տառերի ստեղծման գործում: Նա խոսում է նաև հայկական հին ձեռագրերում եղած նշանագրերի մասին, տալիս դրանց պատկերանշանները և իմաստային նշանակությունը:

Ս. էմինը, որ քաջ ծանոթ էր ժամանակի ուսուսկան ու եվրոպական բանասիրությանը և պատմագրությանը, նկատում է, որ թե՛ ուսուսկան և թե՛ եվրոպական բանասիրական ու պատմագրական միտքը բոլորովին անտեղյակ է հայ հարուստ մատենագրությանը. շատ հարցեր լուսարանելիս կամա թե ակամա շրջանցվում են հայկական աղբյուրները: Դրա հիմնական պատճառն այն էր, որ օտարներին մատչելի չէին հայ մատենագրական գանձերը: Սվ ահա էմինը նպատակ է դնում հայ գրականությանը ու պատմությանը վերաբերող հուշարձանները պարբերաբար թարգմանել և հրատարակել ոչ միայն ուսուսկան, այլև եվրոպական լեզուներով:

Էմինի առաջին և կարևոր գործը, որով նա հիմք դրեց իր թարգմանական գործունեությանը, դա Մովսես Խորենացու «Հայոց պատմության» թարգմանությունն էր, որը հրատարակեց 1858 թ.: Սակայն սա սոսկ թարգմանություն չի կարելի համարել. նա զբաղվել էր արժեքավոր ծանոթագրություններ, մեկնաբանելով շատ հարցեր:

Ակադեմիկոս Բրոսեն, ծանոթանալով Մ. Խորենացու «Հայոց պատմության» էմինի թարգմանությանը, գրում է. «Ձեր Մովսես Խորենացու թարգմանությունը իսկական ակադեմիական թարգմանություն է...»¹⁴:

Սվ ընայած այդ բարձր գնահատականին, հետագայում էմինին իր իսկ թարգմանությունը այլևս չի բավարարում: Ավելի խորանալով խորենացիագիտության մեջ, նա նպատակ է դնում Խորենացուն ուսուսկան ընթերցողին ներկայացնել նոր թարգմանությամբ: Այս փաստը վկայում է, որ էմինը իր գիտական գործունեության ընթացքում եղել է պահանջկոտ և չի բավարարվել ձեռք բերածով:

Ակադեմիկոս Բրոսեն հանձնարարությամբ էմինը թարգմանում է նաև Վարդան Բարձրբերդցու «Պատմություն տիեզերականը», որը լույս է տեսնում 1861 թ., Մոսկվայում, ծանոթագրություններով ու հավելվածներով հանդերձ¹⁵: Բրոսեն բարձր է գնահատում նաև այս գործի թարգմանական աշխատանքը. նա գրում է. «Վարդանը երկու անգամ կարդացի, գրիչս ձեռքս: Ամեն օր ես ինձ շնորհավորում եմ, որ ձեզ հանձնարարել էի նման անտիպ մի պատմագիր թարգմանել... Այդ թարգմանել չէ, այլ խմբագրել, ծանոթագրություններով հարստացնել»¹⁶:

Բրոսեն էմինին հանձնարարում է թարգմանել նաև Ստեփանոս Տարոնեցու «Տիեզերական պատմությունը» և խորհուրդ է տալիս այն ներկայացնել ակադեմիա՝ խնդրելով, որ այն հրատարակվի ակադեմիայի ծախքերով:

Ակադ. Բրոսեն բարձր է գնահատում նաև էմինի՝ Ներսիս Համբրոնացու «Ատենաբանության» թարգմանությունը (1864 թ.), համարելով այն թարգմանչի «տաղանդի վկայությունը»: Էմինը իր թարգմանությանը կցում է նաև ընդարձակ ծանոթագրություններ. որոնք մեծապես նպաստում են երկի իմաստը և ժամանակաշրջանի ոգին հասկանալուն:

Մ. էմինը թարգմանում և 1879 թ. հրատարակում է Շարականների¹⁷: Ահա թե ինչ է գրում էմինը Շարականների իր կատարած թարգմանության մասին. «...Դյուրին բան չէր հաղթահարել բանաստեղծական-աստվածաբանական հակիրճաբան, սեղմ լեզվի դժվարությունները... ձեռնարկիցի այնպիսի գործի, որին ձեռնարկել Ռուսաստանում ոչ ոք չէր համաձայնի ոչ այժմ և ապագայում: Այստեղ անհրաժեշտ է իմանալ երկու լեզուն էլ, բացի այդ, պետք է իմանալ և աստվածաբանական լեզուն»¹⁸: Բայց էմինը կարողանում է հաղթահարել այդ դժվարությունը:

Վ. Լանգլուայի խնդրանքով էմինը ձեռնարկում է Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության»

¹⁴ «Էջմիածին», 1959, № 8—9, էջ 51:

¹⁵ «Всеобщая история Вардана Великого, перевел Н. Эмин (с примечаниями и приложениями)», М., 1861.

¹⁶ Նույն տեղում, էջ 52:

¹⁷ «Шаракан, Богослужебные каноны и песни армянской восточной церкви. Полный перевод. Перевел с древнеармянского языка Н. Эмин», М., 1879.

¹⁸ «Էջմիածին», 1947, № 11—12, էջ 48:

Ֆրանսերեն թարգմանությունը¹⁹ ևս, որ նախատեսվում էր հրատարակել «Հայ պատմագիրների ժողովածու» մատենաշարով: Այն լույս է տեսնում 1867 թ. Փարիզում:

Փառստոս Թուգանդի «Հայոց պատմություն» թարգմանության մասին «Journal des Savants» հանդեսում (1869թ. հոկտեմբեր—նոյեմբեր) և «Göttligische Gelehrte Anzeigen» ամսագրում (1868 թ. հունիս, 62) տպագրվում են Վ. Լանգլուայի դրական գրախոսականները:

Հայկական ապոկրիֆների առաջին լուրջ ուսումնասիրողի, դրանց արժեքավորողի ու օտարներին թարգմանարար ծանուցանելու պատիվը ևս պատկանում է Մ. էմինին: Նա տարբեր ժամանակներում (1874—1880) տասից ավելի այդպիսի գրվածք է թարգմանել ռուսերեն, մեկնաբանել ու հրատարակել: Իսկ 1880 թ. հանդես եկավ մի հոդվածով²⁰, հարց բարձրացնելով՝ «Հավաքել բոլոր հայկական ապոկրիֆները, որոնք պահպանվել են մատենադարաններում ու վանքերում: Ինքը՝ էմինը անձամբ կազմում է 106 ապոկրիֆ ստեղծագործությունների ցուցակ:

Մ. էմինը 1853—1861 թթ. հրատարակության է տարաստում և լույս ընծայում նաև Հովհաննես Դրասխանակերտցու Հայոց պատմությունը (1853 թ.), Ղազար Փարպեցու Թուղթը (1860 թ.), Մխիթար Այրիվանեցու Հայոց պատմությունը (1860 թ.), Վարդան Բարձրբերդցու Տիեզերական պատմությունը (1861 թ.), Ստեփանոս Օրբելյանի «Պատմություն տանն Սիսական» երկը (1861 թ.): Սա մի դժվար աշխատանք էր, որ նա կարողացավ իրականացնել կարճ ժամանակում:

Վերը նշվածով չի սահմանափակվում մեծ գիտնականի ու մանկավարժի գիտական ու մանկավարժական գործունեությունը: էմինը ղրաղվել է նաև հայոց պատմության, գրականության, բանասիրության, հնագիտության հարցերի լուսարանմամբ:

Այդ էր պատճառը, որ 1886 թ., նկատի ունենալով Մկրտիչ էմինի մեծ վաստակը գիտության և մանկավարժության բնագավառում, հայ հասարակական լայն շրջանները մեծ շուքով նշեցին նրա գործունեության հիսնամյակը: Նույն թվականին Մոսկվայի կայսերական համալսարանը, համալսարանին առնթեր՝ բնագիտություն, հնագիտություն սիրողների կայսերական ընկերությունը, ինչպես նաև Մոսկվայի կայսերական հնագիտական ընկերությունը բարձր գնահատելով էմինի գիտական ծառայությունները, նրան ընտրում են իրենց պատվավոր անդամ: էմինը բարձր գնահատվեց ոչ միայն իր հայրենակիցների ու ռուսական գիտական մտքի, այլև եվրոպական նշանավոր գիտնականների կողմից:

¹⁹ Faustus de Byzance, Bibliothèque Historique, en quatre Livres, traduite pour la première fois de l'Arménien en français par M. Emin, Paris, 1867.

²⁰ «К вопросу о собрании армянских апокрифов», տե՛ս «Труды Московского археологического общества», т. VIII, М., 1880.